

ՌՈՒԶԱՆ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

ԱՎԱՐԱՅՐԻ ԾԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՌԻՍՈՑՈՂԱԿԱՆ- ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ղասական հայ գրականությունը դեռևս 5-րդ դարից հետապնդել է ուսուցողական-հայրենասիրական նպատակներ, և այդ իրողությունը հայ մատենագիրները հաճախ շեշտել են հենց ուղղակի իմաստով: Վարդանանց դյուցազնապատումը ներկայացնող Եղիշեն ունի այսպիսի անկեղծ խոստովանություն՝ կապված Վասակ Սյունեցու անձի հետ. «Այս հիշատակարանը գրվեց նրա մասին՝ նրա հանցանքները կշտամբելու և նրան մեղադրելու համար, որպեսզի ամեն մարդ, որ լսի և իմանա այս բանը, նզովք կարդա նրա հետևից և նրա գործերին ցանկացող չլինի»:¹ Ի հակադրություն Վասակ Սյունեցու անձին ուղղված պատմական նզովքի, սրբացվել է Վարդան Մամիկոնյանը՝ հայոց քաջարի սպարապետը, Ավարայրի նշանավոր նահատակը:

«Վարդանանքը» ավագ դպրոցի տասներորդ դասարանի կարևորագույն թեմաներից է և դպրոցական ամենավերջին ծրագրում կարդում ենք. «Դերեմիկ Դեմիրճյան - 8 ժամ, «Վարդանանք», - Կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: Պատմական նյութը Դեմիրճյանի ստեղծագործության մեջ: «Վարդանանք» պատմավեպը, գրության շարժառիթը, դարաշրջանը, աղբյուրները: Սյուժեն, կառուցվածքը, գլխավոր կերպարների բնութագիրը: Վեպի լեզուն և ոճը»:² Այս թվարկման մեջ հատուկ ձևով չի առանձնացված Ավարայրի ճակատամարտի հատվածը, մինչդեռ նրա վերաբերյալ աշակերտի գիտելիքների պաշարի մեջ ունեցած տեղը անհնար է չկարևորել, որովհետև «Վարդանանց պատմության» կիզակետը Ավարայրի հերոսամարտն է՝ 5 -րդ դարակեսի ողջ պատմական իրադարձության հավերժորեն անմոռաց հանգուցալուծումը: «Վարդանանքը» ուսուցանող մասնագետից պահանջվում է՝ ա. պատմական առաջնահերթ աղբյուրների իմացություն, բ. Ավարայրի և նրա նահատակների հիշատակը հավերժացնող հիմնական գլուխգործոցների իմացություն, գ. մանկավարժի հատուկ հմտություն՝ Դ. Դեմիրճյանի գրական երկի հայրենասի-

¹ Եղիշեն, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Ե, 1989, էջ 283, այսուհետ՝ էջերը տողում:

² Հայ գրականություն, Ծրագիր, Հանրակրթական դպրոցների 9 - 10-րդ դասարանների, Երևան, 1999, էջ 14:

րական գաղափարական պատգամների համակելու ուժը աշակերտին փոխան-
ցելու համար:

«Վարդանանքի» գրականագիտական մեկնություններում բազմաթիվ բանասերներ (Յր. Սուրադյան, Ս. Արզումանյան, Յր. Թամրազյան և ուրիշներ)³ նշել են, որ Դ. Դեմիրճյանի պատմավեպի վրա ակնհայտ է եղիշեի երկի առաջնահերթ ազդեցությունը: Ուսուցիչը նյութի իր մատուցման ժամանակ հպանցիկ պետք է նշի այն կարևոր աղբյուրները, որոնք պատկերում են Ավարայրի դեպքերը: Դրանից են հինգերորդ դարի ևս երկու պատմիչների երկերը՝ Սովսես Խորենացու և Ղազար Փարպեցու: Հայոց պատմահայրը չի տվել Ավարայրի ճակատամարտի անունը, սակայն իր ողբում հիշատակում է նրան անմիջապես հետևած տխրեցնող ավերումները: «Ասպատակություններ են գալիս անհատնում, շատ տեղերի վրա, տները գերվում են, ստացվածքները հափշտակվում, գլխավոր մարդիկ կապվում են, հայտնի անձեր բանտարկվում են, դեպի օտարություն են աքսորվում ազնվականները, անթիվ նեղություններ են կրում ռամիկները, առնվում են քաղաքներ, քանդվում են ամրոցներ, ավերվում են ավաններ, հրդեհվում են շինություններ...»:⁴ Ղազար Փարպեցին ուղղակի և ընդարձակ անդրադարձ ունի Ավարայրի հերոսամարտին, սակայն նրա նկարագիրը չունի եղիշեի հուժկու ներշնչումը և հոգեկան վերելք առաջացնող պաթոսը, այն հայրենասիրական է, բայց նկարագրական հանդար-
տությամբ գրված: Ավելին քրիստոնեական նահատակին նկարագրող դատողությունները միահյուսվում են ճակատամարտի պատկերին, մի համգամանք, որն իսպառ բացակայում է եղիշեի վրձնածոյունցազնական կմվում: Նահատակների թիվը նույնն է, ինչ եղիշեի մոտ. «Բոլորը միասին լինում են հազար և երեսունվեց մարդ, որոնցից յուրաքանչյուրին վարձահատույց Քրիստոսը գրանցված պահում է կենաց մատյանում»:⁵ Համեմատական նույնությունն ունեն մահախառն մախարարները հինգերորդ դարի երկու պատմիչների մոտ, ավելի շուտ զուգադրումը հուշում է Ղազար Փարպեցու տեղյակ լինելը եղիշեի բերած ցանկին:

Եղիշե. «Եվ սրանք են այն քաջ նահատակների անունները, որոնք այդ նույն տեղում վախճանվեցին:

Մամիկոնյան Քաջ Վարդանը հարյուր երեսուն և երեք մարդով,
Խորխոռունյաց ցեղից Կորովի Խորենը տասնինը մարդով,

³ Տե՛ս Յր. Սուրադյան, Դերենիկ Դեմիրճյան, Երևան, 1961, Ս. Արզումանյան Սովետահայ պատմավեպը, հ. 2, Ե., 1967, Յր. Թամրազյան, Սովետահայ գրականության պատմու-
թյուն, Ե., 1984:

⁴ Սովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 453 – 455:

⁵ Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Թուրք Վահան Մամիկոնյանին, Ե., 1982, էջ 171:

Պալոււնյաց ցեղից Արի Արտակը հիսուն և յոթ մարդով,
Գնթոււնյաց ցեղից Զարմանալի Տաճատը տասնինը մարդով,
Դիմաքսյանց ցեղից Իմաստուն Զմայակը քսաներկու մարդով,
Քաջբերունյաց ցեղից Զրաշակերտ Ներսեհը յոթը մարդով,
Գնոււնյաց ցեղից Մանուկ Վահանը երեք մարդով,
Ընծայնոց ցեղից Արդար Արսենը յոթը մարդով,

Սրվանձտյան ցեղից Զառաջադեմ Գարեգինը երկու հարազատներով և տասնութը մարդով/241-243/:

Պազար Փարպեցի

Իսկ նրանք, որ այն ժամին երանելի ու երկնավոր կոչման արժանացան սուրբ Վարդանի հետ և մահատակվեցին, սրանք էին.

Խորխոռունյաց տոհմից՝ երանելի Խորենը,
Պալոււնյաց տոհմից՝ երանելի սեպուհ Արտակը,
Գնդոււնյաց տոհմից՝ երանելի Տաճատը,
Դիմաքսենից տոհմից՝ երանելի Զմայակը,
Քաջբերունյաց տոհմից՝ երանելի Ներսեհը,
Գնոււնյաց տոհմից՝ երանելի Վահանը,
Ընծայնոց տոհմից՝ երանելի Արսենը,
Սրվանձտա տոհմից՝ երանելի Գարեգինը /171/:

1947 թվականին գրված գրականության դասավանդման մեթոդիկայի ձեռնարկում այդ բնագավառի մեծահամբավ մասնագետ Գ. Գուկովսկին բազմիցս շեշտում է միջնակարգ դպրոցի ավագ դասարաններում գրականության խորքային ուսուցման անհրաժեշտությունը և ծանրակշիռ եզրահանգումներով հերքում է այն անհեթեթ կարծիքը, թե 20-րդ դարի դպրոցում գրականության տեսությանն ու պատմությանը չարժե հատկացնել ուսումնական ծրագրերում մեծ տեղ: Նա պահանջում է, որ գրականության ուսուցիչը մեծագույն ջանքեր թափի գրական երկի մանրագնին ուսուցման համար, և դա համարում է առաջավոր դպրոցի անհրաժեշտ նախապայմաններից, երբեք չհնացող նախապայմաններից. «Наука о литературе формирует, определяет, научно, объективно-исторически устанавливает принципы понимания и восприятия литературы — на данном этапе передового развития человечества.

...Следовательно, предположение о том, что мы можем оставить детей как бы лицом к лицу с произведениями литературы и basta, все будет благополучно, так как искусство само делает свое дело, - такое предположение абсурдно».⁶

Լինելով հայ գրականություն դասավանդող ուսուցիչ՝ պնդում ենք, թե այս մոտեցումը երիցս իրավացի է: Այսօր դրված են հայոց լեզվի անադարտության,

⁶ Гуковский Г. Изучение литературного произведения в школе, (Методические очерки о методике). Москва — Ленинград, 1966, стр. 94.

նրա ճշգրիտ իմացության, բանավոր ու գրավոր խոսքի գրական մաքրության խնդիրները, որոնք առանց դպրոցական տևական ուսուցման, առանց մեթոդական փորձված ձևերի հնարավոր չէ իրականացնել բարձրացող սերնդին ուսուցանելու խնդիրներում: Խոսքը հատ ու կենտ տաղանդների և գուցե համճարների մասին չէ, ինչպես ասենք Պարույր Սևակը իր գյուղական ուսուցչից ավելի գրականություն գիտեր, և ինքն էր գրում նրա դասերի ասելիքը, այլ զանգվածային աշակերտության մասին, որոնց համար եղել են ու պիտի լինեն հոգատար ու օրինակելի դպրոցը և ուսուցիչը:

«Վարդանանք» թեման յուրացնելու համար հենց ուսուցիչը պետք է քաջատեսյակ լինի կարևոր գրական գործերին, ճշգրտորեն ըմբռնի եղիշեի մատյանի էությունը, նրա վերժամանակյա պատգամները, «Վարդանանքի», եղիշեի երկի, նրանց հետ միջնորդավորված գրական օղակների ընդհանուր հայրենասիրական ու համամարդկային կապին: Այս իրողությունը հիմնալի ձևով է բացահայտել հայ գրականության բարեկամն ու մեծ գիտակը՝ Յուրի Վեսելովսկին՝ եղիշեին նվիրված իր մեծարժեք հոդվածում («Литературный деятель героической эпохи Егише вардапет»)⁷, որի մեջ չփստելով եղիշեի մատյանի պատմական արժեքը, հատուկ ձևով շեշտում է նրա գրական վարպետությունը և համոզված է, թե եղիշեն էլ Սովսես Խորենացու նման իրավունք ունի կոչվելու Քերթովահայր. «Но можно ли считать главное произведение Егише только историческим трудом? Нет подобно Моисею Хоренскому, Егише может смело быть назван древнеармянским литератором!»⁸.

Գրականագիտական խորաթափանցությամբ Յու. Վեսելովսկին բացահայտում է եղիշեի քրիստոնեական մտածողության վերաժամանակյա, համամարդկային կողմը՝ կապված Ավարայրի հերոսամարտի դեպքերի հետ: Ավարայրի երգիչը խաղաղասիրության ջատագովն է, նա երագում է մարդկանց տեսնել եղբայրական համերաշխության մեջ և ոչ թե պատերազմներում, առավել ևս վրեժի ու չարության խառնարանում. «Миролюбие его отличительная черта. Войну он допускает только оборонительную, вызываемую насущной необходимостью защищать родину от посягательств могущественных соседей. Бесцельное истребление людей ему ненавистно и чуждо, оно наводит его на грустные думы»⁹.

⁷ Ю. Веселовский, Очерки армянской литературы, истории и культуры, Ереван, 1972, стр. 107.

⁸ Նույն տեղում, էջ 107:

⁹ Նույն տեղում, էջ 10:

Ավարայրի հերոսամարտը այն թեման է, որով կարելի է վերջնականորեն ձևավորել աշակերտների պատկերացումները արդարացի և անարդարացի պատերազմների մասին: Ավարայրը հայկական դարավոր մտածողության մեջ ինքնապաշտպանության, անձնվիրության, արժանապատվության, ազգային ինքնագիտակցության խորհրդանիշ է և ելակետ: Այն ընդօրինակման, հավերժական ներշնչման հիրավի անսպառ աղբյուր է, համաժողովրդական միաբանության առհավատչյա, որին ձգտել են հայերը իրենց պատմության ամենադժվար պահերին: Ավարայրը այն հոգեբանական հուժկու երևույթն է, որի շնորհիվ մարդը կարող է հասնել գերագույն արդյունքի՝ հաղթել հենց ինքն իրեն, հաղթել մահին, անմահությունը դիտել որպես Ճշգրիտ մի ելք, եթե այն արվում է հանուն ընդհանուր բարօրության: Ահա այս մտայնությունը ընկալվել է հենց ողջ միջնադարում: Ուսուցչի առջև պարտադիր խնդիր է դրվում համառոտակի անդրադառնալ այն հեղինակների երկերին, որոնք ավագ դպրոցի ծրագրում կան առանձնացված կամ նախատեսված են ակնարկային ձևով անցնելու համար: Դրանցից առաջինը Ներսես Շնորհալին է և նրա հրաշալի «Վարդանանց» շարականը, որն այսօր էլ երգում են հայոց եկեղեցիներում, և այն ստեղծված է Վարդանանց տոնի ծիսական կողմը կատարյալ դարձնելու նպատակով: Բանասիրական առանձին տներում հիշատակվում են Ավարայրում ընկած այն նախարարների անունները, որոնց տեսանք եղիշեի և Ղազար Փարպեցու ցուցակներում, չեն մոռացվում նաև բոլոր մնացյալ զոհերը՝ թվով հազար երեսունվեց մարդ:

Ամբողջ խումբը թվով հազար երեսունվեց էին,
Որ նրանց հետ պատերազմում նահատակվեցին արիաբար,
Եվ հեղեցին արյունն իրենց՝ ի նորոգումն եկեղեցու,
Նրա հետ պսակելով երկնային հանդիսադրողից :¹⁰

Նոր գրականության մեջ Վարդանանց ոգեկոչողը եղավ խաչատուր Աբովյանը հենց իր գլուխգործոցում՝ «Վերք Չայաստանի» վեպում: Այդ ծրագրային հանճարեղ գործում, իր ազգափրկիչ խորհրդածություններում խաչատուր Աբովյանը քաջ Չայկին հիշելուց հետո իրեն զգում է որպես Ավարայրի զինվոր, որի առաջնորդը հենց ինքը՝ Վարդան Մամիկոնյանն է, «Էն տեղը, որ Վարդան Մամիկոնյան, Վահան՝ ընտիր եղբայր նորա, անօրինակ քաջությամբ, որ աշխարհի դեռ չի տեսել, իրենց օրենքն ու սուրբ եկեղեցու պատիվը արնով գնեցին»:¹¹ Աշակերտը գիտի Ղևոնդ Ալիշանի մասին, հատկապես ակնարկային գրական թեմայի մեջ հպանցիկ անդրադարձ կա վերջինի՝ «Երգ նահապետի»

¹⁰ Ներսես Շնորհալի, Երգեր, Եղեսիայի ողբը, Երևան, 1982, էջ 61:

¹¹ Խ. Աբովյան, Ընտիր երկեր, հ. 1, 1939, էջ 68:

ժողովածուին, որի մեջ է զետեղված «Պլաուլն Ավարայրի» պոեմը: Պոեմի մեջ բանաստեղծը կենդանի է պահում Ավարայրի հերոսամարտի դրվագները, նա ներշնչված է Եղիշեի մատյանի գեղարվեստական նկարագրից և մտովի սլացել է դարերի խորքը, վերակենդանացրել նահատակներին, հոգեբանորեն ծուլվել նրանց խռովքին ու ըմբոստացմանը, գիտակցված մահվան մղվելու կամքին, որը հիացմունք է պատճառում Վարդան Մամիկոնյանին:

Տեսա՛վ, հիացա՛վ Վարդանն ու կանչեց,
«Հայր իսկի տեսիլդ մեզ չըստեց,
Վաղիվ տի կըռվինք քաջությամբս մեծ,
Երիկունն հանգչիմք ի դարպասն աստղեց»:¹²

Վարդանանց նահատակների Աստծու կողքին լինելու հանգամանքը մի գեղեցիկ տեսիլով նկարագրել է Եղիշեն իր պատմության վերջին՝ վկայաբանական գլխում: «Եվ մինչդեռ աչքերը երդիկին սևեռած նայում էր երկինք, հանկարծ տունը լույսով լցվեց, և նրան մի լուսեղեն սանդուղք երևաց, որ դրված էր երկրից մինչև երկինք, և խումբ-խումբ զորքեր վեր էին բարձրանում, և բոլորի տեսքը նոր էր ու չքնաղ, ահավոր ու սքանչելի, ինչպես հրեշտակների տեսքը: ... Եվ նա այնքան շատ մոտեցավ, որ մինչև անգամ ճանաչեց նրանցից երեքին՝ Վարդանին, Արտակին և Խորենին: Նրանք իրենց ձեռներին ինը պսակ ունեին, միմյանց հետ խոսում էին և ասում. «Ահա եկավ – հասավ ժամանակը, որ սրանք էլ խառնվեն մեր խմբին»/303/:

1861 թվականին Ռափայել Պատկանյանը տպագրում է «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմը, որում Ավարայրի ճակատամարտի դեպքերի միջոցով գրողը քննում է իր ժամանակի համար հրատապ քաղաքական հարցեր: Նախքան Ավարայրի խորհուրդը արդիականացնելու, նա վերհիշում է պատմական կոնկրետ դեպքը.

Հայոց քաջորայք, պարսից կըտրիճներ,
Պատրաստ են չափել ուժերը բազկին,
Արյամբ կըշտացնել ժայռը նիզակին,
Սանձակոծ ծիանք, անճոռնի փղեր
Հողն էին փորում ոտով անհամբեր...
Հանկարծ բանակից դուրս եկավ Վարդան
Ու ահեղ կըռվին տվեց նա նըշան:¹³

Պոեմի գաղափարական կիզակետը «Վարդանի երգը» հատվածն է, որի մեջ Ռ. Պատկանյանը առաջադրում է ազգային - ազատագրական պայքարի իր ելակետը.

Հիմի է՛լ լըռենք, եղբարք, հիմի էլ,

¹² Ղ. Ալիշան, Նվագներ, Երևան, 1957, էջ 28:

¹³ Ռ. Պատկանյան, Երկեր, Երևան, 1980, էջ 64:

Երբ մեր թըշնամին իր սուրն է դըրել,
Իր օրհասական սուրը մեր կըրծքին,
Ականջ չի դնում մեր լաց ու կոծին,
Ասացե՛ք եղբարք հայեր, ի՞նչ անենք, -
Հիմի է՞լ լըռենք:¹⁴

Այս հարցադրմանը տրվում է գործնական պատասխան, որը շատ նման է Վարդանաց վարքագծին և Ավարայրի խորհրդին.

Թո՛ղ լըռե մունջը, անդամալույծը,
Կամ՝ որոց քաղցր է թըշնամու լուծը,
Բայց մենք, որ ունենք հոգի ու սիրտ քաջ,
Ե՛կ անվախ ելնենք թըշնամու առաջ,
Գոնե մեր փառքը մահով ետ խըլենք -
Ու այնպես լըռենք:

Ահա Ռ.Պատկանյանի պոեմի «Վարդանի երգը» հատվածի ծաղրանմանությունը /պարոտիան/ է գրել Միքայել Նալբանդյանը Պետրոպավլովյան ամրոցում բանտարկված ժամանակ: Այն առաջին անգամ տպագրվել է Մ.Միանսարյանի «Զնար հայկականում»՝ 1868 թվականին: Մ. Նալբանդյանը չժխտելով արտաքին թշնամու վտանգը՝ ծանրանում է ներքին ազգային խնդիրների վրա. հաճախ մեր ազգին առաջնորդում են ստրկամիտ մարդիկ: Խորին զայրույթն է փոթորկում Մ. Նալբանդյանի հոգեկան աշխարհը, երբ Մովսես Խորենացու նման հիշում է ազգային ներքին թերությունները, որոնք էլ առավել հեշտացնում են օտարի գործը հայ ազգին տիրելու հարցում.

Հիմի է՞լ խոսենք, եղբարք, հիմի՞ էլ,
Երբ ընտանեկան երկպառակությանը
Ուրիշ բան չունինք, բայց իրար դավել,
Եվ սարսափելի ազգուրացությանը
Մեր նախնյաց ուխտը ոտքով կոխել ենք.

Հիմա է՞լ խոսենք:¹⁵

Մ. Նալբանդյանը քննադատում է ազգային անմիաբանությունը, անարժան մարդկանց առաջ զլուխ խոնարհելը, հոգևոր քահանայապետության պաշտոնները այլոց միջոցով գրավելը, երեսպաշտությունը: Թվում է, թե լսվում են Մովսես Խորենացու ողբի հայտնի խոսքերը. «Եվ առհասարակ սերն ու ամոթը ամենքից վերացած»:¹⁶ Այս խոսքերը ազգային ներքին ինքնամաքման խորիմաստ կոչեր են, որոնք օգնելու են երկրի արտաքին խնդիրները լուծելու.

Էլ մեր երեսին մնա՞ց մի կաթիլ
Ամոթի սուրբ ջուր, որ բերան բանանք:
Ո՛չ, թե չենք ուզում հողից հող կորչիլ,

¹⁴ Նույն տեղում, էջ 70:

¹⁵ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, վեց հատորով, հ. 1, Ե., 1975, էջ 126:

¹⁶ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 453:

Թշնամու արյունով մեր թրին ջուր տանք,
Ազգ, եկեղեցի փրկենք, պաշտենք,
Ապա թե՛ խոսենք:¹⁷

«Հայ գրականության մեթոդիկա» դասագրքում Թ.Ջուհարյանը մեթոդական վերլուծության է ենթարկել Րաֆֆու «Սամվել» պատմավեպը:¹⁸

«Սամվելի» վերլուծական շարադրանքի մեջ չկա որևէ ճակատամարտի նկարագիր: Գրականության դասավանդման առումով գրեթե բացակայում է նման վերլուծումը մեզ ծանոթ «Վարդանանքի» մեթոդական քննություններում, մինչդեռ աշակերտի համար գերխնդիր է այդ ճակատամարտի նշանակության գեղարվեստական մարմնավորումը մինչև Դ. Դեմիրճյանի «Վարդանանքը» և հենց «Վարդանանքի» մեջ նրա ունեցած եզրափակող դերը:

Դ. Դեմիրճյանին հաջողվել է պահպանել Ավարայրի ճակատամարտի այն դինամիկան, որն առկա է Եղիշեի նկարագրում: Բերենք մի շարք համեմատական հատվածներ.

Եղիշե. «Եվ երբ այս այսպես պատրաստվեց, երկու կողմերն էլ սրտմտությամբ և մեծ բարկությամբ զայրացան և զազմացած զորությամբ միմյանց վրա հարձակվեցին. երկու կողմերի աղմուկն ու աղաղակը ճայթում էր ինչպես իրար խառնված ամպերի միջից, և ձայների դղրոյունը շարժում էր լեռների քարանձավները: Բազմաթիվ սաղավարտներն ու զրահապատված զորականների զենքերը փայլում էին ինչպես արևի ճառագայթների շողերը: Նաև բազմաթիվ սուսերների շողալուց և բազմախումբ միզակների ճոճվելուց կարծես ահագին կրակ էր թափվում երկնքից: Որովհետև ո՞վ կարող է պատմել ահավոր ձայների մեծ իրարանցումը, և թե ինչպես վահանավորների թնոյունն ու աղեղների լարերի ճայթյունը առհասարակ խլացնում էին բոլորի ականջները»/235-237/:

Դ. Դեմիրճյան. «Ձարհուրելի սպանդ էր և իրար ոչնչացումն: Բազմահազարանոց զորաբանակները խժռում էին իրար: Անկարգ, խառնաշփոթ իրար էին գալիս վահանակիրները, միզակավորները, տապարավորները, հեծյալն ու հետիոտնը: Նրանց զենքերի, վահանների, մարդկանց ու նժույգների խառնփնթորը նմանվում էր գզգզված, ջարդուփշուր անտառի, որի միջից ավերելով ու կոտորելով պտտվում էր անսամձելի մրրիկը՝ Վարդանը»:¹⁹

Եղիշե. «Այս մեծ տազնապի մեջ դեպի վեր նայեց քաջ Վարդանը և տեսավ,

¹⁷ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, վեց հատորով, հ. 1, էջ 127:

¹⁸ Թ. Ջուհարյան, Հայ գրականության մեթոդիկա, Երևան, 1980, էջ 350 – 370:

¹⁹ Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 512 – 519:

որ Պարսից գորքի ընտիր – ընտիր քաջ զորականները Հայոց գորքի ծախ կողմն ընկճեցին. նա մեծ ուժով հարձակվեց այն տեղը և շուրջը պատելով կոտորեց մինչև նույն տեղը: Եվ այնպիսի տազնապ ու իրարանցում գցեց նրանց մեջ, որ մինչև անգամ Սատյան գնդի հաստատուն կազմակերպությունը քայքայվեց – ցրիվ եկավ, և նա դեռևս պարտություն չկրած՝ փախուստ տվեց»/237/:

Դ. Դեմիրճյան. «Եվ իրոք՝ Վարդանը ջարդում էր չտեսնված անգթությամբ: Նրա ճանապարհը լցվեց դիակներով, վիրավորներով: Նա թաթառի պես ճարակելով գնում էր, շրջվում այս ու այն կողմ, և ոչ մի հնար չկար նրա առջև կալնելու»/519-520/:

Աշակերտը ի վիճակի է հասկանալ Եղիշեի՝ դասական հեղինակի հետևյալ բնորոշումը. «Որովհետև ո՛չ թե մի կողմը հաղթեց, և մյուս կողմը պարտվեց, այլ քաջերը քաջերի դեմ դուրս գալով՝ երկու կողմերն էլ պարտություն կրեցին»/241/: Այս բնորոշման բացատրությունը կհարստացնի աշակերտի գիտելիքների գանձարանը, կսովորեցնի թշնամու նկատմամբ ունենալ սեփական արժանապատվությունը պահելու կարևորությունը, դժվար պայմաններում անգամ չկորցնել մարդուն հատուկ հոգեկան վեհությունը և անարգ խոսքեր չուղղել նրան:

Այս թեմայի ժամանակ ուսուցիչը դասարան կրերի Գրիգոր Խանջյանի «Ավարայրի ճակատամարտը» կոթողային նկարը և կտա համապատասխան բացատրությունը, կբացատրի նաև, որ նկարի հիման վրա ստեղծված գորելենը գտնվում է Էջմիածնի վեհարանում: Դեմիրճյանը վեպն ավարտում է ընկած նախարարների այն ցանկով, որը կա Եղիշեի և Դ. Փարպեցու մոտ, սակայն նա կրկնում է՝ այն էլ բառացի, Եղիշեի էպիտեմները և ցանկին կցում է հայոց փափկասուն տիկնամը Եղիշեի նկարագիրը: Եվ Եղիշեի, և՛ Դեմիրճյանի մոտ Ավարայրի ճակատամարտն ընդհանրացվում է նաև որպես հետագա դարերի ազգային - ազատագրական պայքարի խորհրդանիշ. «Այդպես անցան օրեր, տարիներ, անցան դարեր...»: ²⁰

Իրավացի է գրականության մեթոդիստ Գ. Գուկովսկին, որը պահանջում է գրական երկերի խորացված ուսուցում դպրոցում, որովհետև այդ ձևով միայն աշակերտին կարելի է զինել տվյալ գիտաճյուղի գիտելիքներով, ²¹ և հենց այդ ձևով հնարավոր կդառնա ճիշտ հասկանալ տարբեր ժամանակների գրական երկերը և տեսնել նրանց ազգային ու համամարդկային ընդհանրությունները:

²⁰ Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 533:

²¹ Г. Гуковский, Изучение литературного произведения в школе, стр. 13.